Դանդաղաքայլներ

1. ԱՐԵՎԵԼՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԻ ԵՎ ՁԱՄ-ՁԸՐԱՂԻ ՀԵՔԻԱԹ

(էջ 13)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (այսուհետև՝ ՀՆԱԶԻ) բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 171)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Գրի է առել Նաղարեթ Պ. Մարտիրոսյանը 1915 թ. հոկտեմբերի 20-ին, Ալեքսանդրապոլում։ Էջատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է. «Պատմեց Ներքին Բուլանըխի Փիոնք գյուղացի Մելքոն Նահապետյանը 35-ամյա անգրագետ երիտասարդը»։

Ձեռագրի առաջին էջում գրված է. «Պատմեց Ներքին Բուլանըխի Փիոնք գյուղացի.... 1915 թվականի հոկտեմբերի 22-ին»։

Ամսաթվերի տարբերությունը հավանաբար նրանից է, որ հեքիաթը ընդարձակ է, մի օրում չի ավարտվել պատմելը, հաջորդ երկու օրում է գրվել։

2. ՄԱՀՄՈՒԴ ԵՎ ՄԱՀԲՈՒԲ

(էջ 30)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 173)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Կողքին, փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Արտաշես Բարսեղյանը, 1915 թվականի հոկտեմբերի 22-ին, Ալեքսանդրապոլում։ Էջատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է. «Պատմեց Գրիգոր Կիրակոսյան, գրի առավ Բարսեղյանը 1915 թ. հոկտեմբերի 22-ին, Ալեքսանդրապոլում»։

Ասացողի մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում և ոչ էլ գրառման այլ հանգամանքների մասին։

Գրիգոր Կիրակոսյանի մասին 174 ձեռագրում կան տեղեկություններ «Գրիգոր Կիրակոսյան, 62 տարեկան, Բուլանըխի Փիոնք գյուղացի, երկրագործ, տասերկու տարի մնացած Թիֆլիս։ Լեզուն շատ թեթև ազդեցություն կրած է ուրիշ բարբառներից։ Հեքիաթը սովորել է իր հորեղբորից»։

3. ՔՅՈՒՉՈՒԿ ԱՀՄԱԴ

(էջ 43)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրաման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱՁի բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 202)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ, Փիոնբ»։

Գրի է առել Երվանդ Պեղգայանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 20—21-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի բնակիչներեն Սազաթել Գրիգորյան անուն եռեսունհինգամյա անգրագետ երիտասարդը, որ երբեմն ապրել է Թիֆլիսում, իսկ իր երկրում պարապելիս է եղել հողագործությամբ»։

4. ՌԱՀԻԹ ԸՆ ԹԻՋԻՐ

(էջ 71)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրաման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱՁի բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 231)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվականի հոկտեմբերի 15-ին, Կարաքիլիսայում Արևշատ Խլղաթյան—Տոնեյան, Բուլանըխի Շեխյաղուր գյուղացի, քառասուն տարեկան անգրագետ անձ։ Պանդխտած է Կարս, Թիֆլիս»։

5. ՀՈՒՐՆԻԿ ԵՎ ՀՐԵՂԵՆ

(էջ 81)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում հրատարակված բնագրի (էջ 401—416)։

Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխա բարբառով»։

Գրի է առել Ս. Հայկունին։ Էջատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է. «Պատմած է Ղուկաս Տ. Մինասյան Համզաշեխ գյուղացի։ Ժողովրդյան կենդանի և վառվռուն բարբառով ասված է. սակայն տառերու իսկական հնչման, զոր շատ դժվարին էր, այնչափ ուշ չէ դարձրած, այլ սովորական ձևով գրի առած եմ»։

6. ՇԻՐԻՆ ՇԱՀ

(էջ 95)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս. Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 174)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Արտաշես Բարսեղյանը, 1915 թ. հոկտեմբերի 21-ին, Ալեքսանդրապոլում։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց Գրիգոր Կիրակոսյան, 62 տարեկան, Բուլանըխի Փիոնք գյուղացի, երկրագործ։ Տասներկու տարի մնացած Թիֆլիս։ Լեզուն շատ թեթև ազդեցություն կրած է ուրիշ բարբառներից։ Հեքիաթը սովորել է իր հորեղբորից»։

7. ՋՈՒԱՆՇԱՀ

(էջ 115)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 238)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխի Շեխյաղուբ գյուղ»։

Գրի է առել Երվանդ Լալայանցը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվականի հոկտեմբերի 15-ին, Մեծ Ղարաքիլիսա գյուղում, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի Գասպար Շհոյան 45 տարեկան անգրագետ երկրագործը»։

8. ՀԱԶԱՐԱՆ ԲԻԼԲՈՒԼ

(էջ 121)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 225)։

Ձեռագրի վրա վերևում գրված է «Բուլանըխ», նրա տակ գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Ձեռագրի տեքստից առաջ գրված է վերնագիրը՝ «Հեզարի բյուլբյուլ», իսկ առաջին էջում, ձեռագրի №-ի կողքին գրված է. «Հազարան բիլբուլ». նպատակահարմար գտանք այս թողնել իբրև վերնագիր։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 13-ին, Կարաքիլիսեյում, Արևշատ խլղաթյան—Տոնեյան, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի, քառասուն տարեկան անգրագետ անձնավորություն։ Նախապես պանդխտած է Կարս, Թիֆլիս»։

9. ՍԻՆԱՄ ԹԱԴԱՎՈՐԻ ՀԵԲԻԱԹ

(էջ 131)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 192)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեզազյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 24-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի գեղջկուհիներից խաղալ Աբրահամյան անուն, անգրագետ, հիսունհինգամյա պառավը»։

10. ԻՍՔՅԱՆԴԱՐ

(էջ 138)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 210)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրավ» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեզազյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 13-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհի Իդար Գրիգորյան անուն, անգրագետ, քսանհինգամյա կինը»։

11. ԱՀՄԱՏԵ ՔՅԱՄԱՆՏԱՐ

(էջ 142)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 170)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրավ» կնիքը։ Գրի է առել Նազարեթ Պ. Մարտիրոսյանը, որը էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց Փիոնք գյուղացի Մելքոն Նահապետյան, 35-ամյա անգրագետ անձ, Ալեքսանդրապոլի մեջ, 1915 թ. հոկտեմբերի 20-ին, երեքշաբթի»։

Ձեռագրի առաջին էջում, վերնագրից հետո գրված է. «Պատմեց Փիոնք գյուղացի Մելքոն Նահապետյան... 1915 թվ. հոկտեմբերի 22-ին, ուրբաթ օր Ալեքսանդրապոլի մեջ»։

Ամսաթվերի տարբերությունը հավանաբար նրանից է, որ հեքիաթը ծավալուն է և մի օրում չի վերջացրել, հաջորդ օրերին էլ է պատմել ասացողը, և գրի առնողը նշել է առաջին և վերջին օրերը։

12. ՏՈԼՎԱԹ ԽՈՒՇԻՆ

(էջ 157)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 168)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերևում գրված է «Հեքիաթ»։

Գրի է առել Նաղարեթ Պ. Մարտիրոսյանը, 1915 թ. հոկտեմբերի 22-ին, Ալեքսանդրապոլում։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց Ներքին Բուլանըխի Փիոք գյուղացի 35-ամյա անգրագետ Մելքոն Նահապետյանն»։

Ձեռագրի վերջում ևս բանահավաքը գրում է վերոհիշյալ ծանոթությունը, միայն այստեղ ամսաթիվը գրված է հոկտեմբերի 21-ին, չորեքշաբթի, իսկ ակիզբը՝ հոկտեմբերի 22-ին, ուրբաթ։

13. ՋԱՄՈՒՇԱՆ

(էջ 175)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 201)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ, փակագծում գրված է «Բուլանըխ, Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թ. հոկտեմբերի 19-ին—20-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի բնակիչներեն Սաղաթել Գրիգորյան անուն երեսունհինգամյա անգրագետ երիտասարդը, որ երբեմն ապրել է Թիֆլիսում, իսկ իր երկրում պարապել է հողագործությամբ»։

14. ԻՇՎԵՆԻ

(էջ 189)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 182)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ, փակագծում գրված է «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 22-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի գեղջկուհիներեն Իֆո Քրեյան եռեսունամյա անգրագետ կինը»։

15. ՄԻ ՏՂԵՆ

(էջ 195)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 203)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 31-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի գեղջկուհիներից Ֆատֆուռ Ղազարյան անուն անգրագետ երեսունհինգամյա կինը»։

16. ԳՈՐՏԱՆ ՀԵՔԻԱԹ

(էջ 200)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 214)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 12-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհի Իգար Գրիգորյան անուն, անգրագետ, քսանհինգամյա կինը»։

№ 213 ձեռ. ասացողի անունը նիգար է գրված։ Բայց ասացողը նույնն է, հավանաբար թյուրիմացություն է։

17. ՕԽԵՇ

(էջ 204)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում տպագրված բնագրի (էջ 390—394), գրի է առել Ս. Հայկունին։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխա բարբառով»։ Ասացողի մասին և գրառման այլ հանգամանքների վերաբերյալ ոչ մի տեղեկություն չի հաղորդում։

18. ՇԱՀ ԽՈՒՄԱՐ

(էջ 210)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 221)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Ձեռագրի վրա վերնագրի կողքին գրված է. «Բուլանըխ—Կոփ»։

Գրի է առել Նաղարեթ Պ. Մարտիրոսյանը։ Տողատակի ծանոթության մեջ գրված է. «Պատմեց 1915 թվ. նոյեմբերի 28-ին, Երևանում, Կուիեցի Ղուկաս Աղիզյան 25-ամյա կիսագրագետ։ Ռուսիա մնացեր է մի քանի տարի»։

19. ԱՆԽՈՍ ԱՂՋԻԿ

(էջ 218)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում հրատարակված բնագրի (էջ 417—422)։

Վերնագրի տակ փակագծում գրված է «Սոյլամազ խանըմ», սրա տակ մեկ այլ փակագծում գրված է «Բուլանըխա բարբառով»։

Գրի է առել Ս. Հայկունին։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմած է Համզաշեխ գյուղացի հեքյաթ ասող Ենկոն»։

Գրառման այլ մանրամասներ չեն հիշատակվում։

20. ՋԸԲԵ

(էջ 224)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱՋԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 223)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է «Բուլանըխ»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 16-ին, Կարաքիլիսեյում։ Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի Արևշատ Խլղաթ-Տոնեյան քառասուն տարեկան անգրագետ անձնավորությունը»։

21. ԱՍԼ ՋԱԴԱ

(էջ 232)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱՋԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 224)։

Ձեռագրի վրա վերևում գրված է. «Բուլանըխ». նրանից ներքև դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է «Հարազատ որդի»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը 1915 թվ. հոկտեմբերի 13-ին, Կարաքիլիսեյում։ Էջատակի ծանոթության մեջ բանահավաքը գրում է. «Պատմեց Արևշատ Խլղաթյան-Տոնեյան, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի, քառասուն տարեկան անգրագետ անձ։ Պանդխտած է Կարս, Թիֆլիս»։

22. ՓԵՐՈՒ ԽԵՔԱԹ

(էջ 242)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 228)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է «Բուլանըխ»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 17-ին, Կարաքիլիսեյում, Արեշատ Խլղաթ-Տոնեյան, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի, քառասուն տարեկան անգրագետ անձնավորություն։ Պանդխտած է Կարս, Թիֆլիս»։

23. ԽԵԼԱՑԻ ԱՂՋԻԿ

(էջ 250)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 178)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը 1915 թվ. նոյեմբերի 3-ին, Ալեքսանդրապոլում։

Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց Գասպար Տ. Հարությունյան. Բուլանըխի Փիոնք գյուղացի, 52 տարեկան անձնավորություն»։

24. ԻՐԵՔ ԲՈՒՌ ՀՈՂ

(էջ 257)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 208)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ, փակագծում գրված է. «Բուլանըխի Կոփ գյուղ»։

Գրի է առել Երվանդ Լալայանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 12-ին, Ղարաքիլիսա գյուղում (Ալեքսանդրապոլի գավառ) Կոփ գյուղացի միևնույն Սերոբ Գրիգորյանը»։ Գրիգորյանի մասին տե՛ս № 28 հեքիաթի ծանոթագրությունը։

25. ՍՈՅԼԻ ԱԽՋԻԿ

(էջ 264)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱՁԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 187)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ, փակագծում գրված է. «Բուլանըխ-Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեզազյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 26-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի գեղջկուհիներից Իֆո Քրեյան անուն, անգրագետ, եռեսունամյա կինը»։

26. ՔՅԱԶԼԻԿ

(էջ 270)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱՁԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 235)։

27. ԾՈՒՌ ՏՂԻ ՀԵՔԻԱԹ

(էջ 276)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱՁԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 227)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ»։

Գրի է առել Սենեքերիմ Շաղչյանը։ Էջատակի ծանոթության մեջ գրում է. «Պատմեց Կարաքիլիսեյում, 1915 թվ. հոկտեմբերի 17-ին, Արնշատ Խլղաթ-Տոնեյան, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի, քառասուն տարեկան անգրագետ անձնավորություն։ Ճամփորթած է Կարս, Թիֆլիս»։

28. ԱՍԼԱՆԻ ՊԵՍ ՄՏԱՎ, ԿԱՏՎՈՒ ՊԵՍ ԵԼԱՎ

(էջ 281)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱՁԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 207)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է «Կոփ»։

Գրի է առել Երվանդ Լալայանը։ Էջատակին Լալայանը գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 11-ին, Մեծ Ղարաքիլիսա գյուղում, Սերոբ Գրիգորյանը Բուլանըխի Կոի գյուղից, անգրագետ, եռեսունյոթ տարեկան հյուսնը»։

29. ԱԼԵՔՍԻ

(էջ 285)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 226)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Տեքստից առաջ, վերևում վերնագիրն է՝ «Ոգիրի տղա Ալեքսի», իսկ ձեռագրի առաջին երեսի վրա՝ «Ալեքսի», վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 16-ին, Կարաքիլիսեի մեջ, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի Արևշատ Խլաթ-Տոնեյան։ Նախապես պանդխտած է Կարս և Բրիֆլիս։ Արևշատ 40 տարեկան է և անգրագետ»։

30. ՕԶՎԵՆԻ ԾԱՌ

(էջ 292)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 186)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ, փակագծում գրված է. «Բուլանըխ-Փոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 30-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փոնք գյուղի գեղջկուհիներից Իֆո Քրեյան անուն անգրագետ եռեսունամյա կինը»։

31. ԽԻԿԱՐԻ ԽԸՍԵՆ

(էջ 299)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում հրատարակված տեքստի (էջ 422—427)։

Վերնագրի տակ, փակագծում գրված է. «Բուլանըխա բարբառով»։

Գրի է առել Ս. Հայկունին։ Էջատակին գրում է. «Սույն հեքիաթն Խլաթա Քրսեցի Սարիբեգ փոքր ինչ տարբեր պատմած է, նա Բահլուլին կվերագրե, փոխանակ Խիկարին, նաև փոխանակ Ստամբոլին ի Բաղդատ կատարված է դեպքը կասե»։

Գրառման այլ հանգամանքների մասին չի հիշատակում բանահավաքը։

32. ԲԱՑ, ՍԵՎ ՔԱՐՍ

(էջ 306)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Բ հատորում հրատարակված տեքստի (էջ 395—400)։

Վերնագրի տակ, փակագծում գրված է ադրբեջաներեն վերնագիր՝ «Աչ, գաբա դաշմ». նրա տակ մեկ այլ փակագծում գրված է «Բուլանըխա բարբառով»։

Գրի է առել Ս. Հայկունին։ Էջատակին գրում է. «Ասած է Բուլանըխա Համզաշեխ գյուղացի Ենկոնց»։

33. ՔԱՋԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԽԵՐՅԱՔ

(էջ 312)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 188)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։

Գրի է առել Երվանդ Գեղգայանը։ Էջատակին գրում է. «Գրամեց 1915 թվ. հոկտեմբերի 27-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փոնք գյուղի գեղջկուհիներից Իֆո Քրեյան անուն երեսունամյա անգրագետ կինը»։

34. ԹԱԳԱՎՈՐ ՄԵ ՈՒ ՈՒՐ ԷՐԿՈՒ ՏՂԵՆ

(էջ 318)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 232)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։

Գրի է առել Երվանդ Գեղգայանը։ Էջատակին գրում է. «Գրամեց 1915 թվ. հոկտեմբերի 15-ին Կարաքիլիսեյում, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղի գյուղացիներեն Գասպար Շհոյան անուն անգրագետ քառասունհինգամյա մարդը, որ ապրել է գաղթեն առաջ Փոթի, Բաթում և Թիֆլիս քաղաքներում»։

35. ՇԱՐԻ ՄԱՐԳՐԻՏ

(էջ 323)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 184)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվի հոկտեմբերի 26-ին Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փոնք գյուղի գեղջկուհիներից Իֆո Քրեյան անուն անգրագետ եռեսունամյա կինը»։

Գրառման մասին այլ մանրամասնություններ չկան։

36. ԳԱՌՆՈՒԿ ԱԽՊՈՐ ՀԵՔԻԱԹ

(Էջ 332)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 211)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 13-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհի Իգար Գրիգորյան անուն, անգրագետ քսանհինգամյա կինը»։

37. ՍԱՓՈՒՐ-ՍԱՓՈՒՐ ԽՐՃԻԿ

(Էջ 337)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 185)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխ—Փոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 27-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փոնք գյուղի գեղջկուհիներից Իֆո Քրեյան անուն անգրագետ, եռեսունամյա կինը»։

38. ՓԱՐՈՒ

(Էջ 343)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 172)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Գրի է առել Նազարեթ Պ. Մարտիրոսյանը 1915 թվ. հոկտեմբերի 31-ին, չորեքշաբթի, Ալեքսանդրապոլում։ Էջատակին բանահավաքը գրում է. «Պատմեց Բուլանըխի Փոնք գյուղացի, 35-ամյա անգրագետ Մելքոն Նահապետյան»։

39. ԹԱԳԱՎՈՐԻ ՋԱՆԱՎԱՐ ՓԵՍԵՔ

(էջ 348)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 229)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխ»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 17-ին Կարաքիլիսեյում, Արեշատ Խլղաթյան Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի, քառասուն տարեկան, անգրագետ անձնավորություն։ Պանդխտած է Կարս և Թիֆլիս»։

40. ԹԻՋ ՈՒ ԿԵՍ, ԳԵՏՆԻ ՄՈՒՍԵՍ

(էջ 353)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 234)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 16-ին Կարաքիլիսեյում Բուլանըխի Շեխյաղուբ գյուղի գեղջկուհիներեն Դիլբո Սարխոշյան անուն վաթսունամյա պառավը»։

41. ԲԱԼԱՔ ՀՈՐԹԿՈՒ ՀԵՔԻԱԹ

(էջ 356)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 217)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 14-ին Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհի Իգար. Գրիգորյան անուն, անգրագետ քսանհինգամյա կինը»։

42. ՈՂԻՐՆ ՈՒ ԴԵՎՐԻՇ

(էջ 359)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 177)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը 1915 թվ. նոյեմբերի 3-ին, Ալեքսանդրապոլում։ Էջատակին գրում է. «Պատմեց Գասպար Տ. Աբրահամյան, Բուլանըխի Փիոնք գյուղից, 52 տարեկան անձնավորությունը։ Իր գյուղի մեջ զբաղված է երկրագործությամբ։ Բիֆլիսի մեջ ապրած է յոթ տարի»։

43. ՀԱՔԻՄ ԲԵԿ ՈՒ ԴԱՎՐԻՇ ԲԵԿ

(էջ 365)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 190)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 27-ին Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գեղի գեղջկուհիներից Իֆո Քրեյան անուն, անգրագետ եռեսունամյա կինը»։

44. ԹԱՄՔԻ ՀԵՔԻԱԹ

(էջ 370)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 213)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 12-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհի Նիգար Գրիգորյան անուն, անգրագետ, քսանհինգամյա կինը»։

№ 212 ձեռագրում՝ Իգար Գրիգորյան։

45. ՏՂՈՒ ԷՐԱՋ

(էջ 375)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 218)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 15-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի բնակիչներեն Մովսես Գրիգորյան անուն անգրագետ, քսանվեցամյա երիտասարդը»։

46. ՔՅԱՐԻՄ ԲԵԿ

(էջ 381)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 199)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Գատմեց 1915 թվ. հոկտեմբերի 21-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի բնակիչներից Սաղաթել Գրիգորյան անուն, անգրագետ, եռեսունհինգամյա երիտասարդը»։

Ձեռագրի առաջին երեսի վրա վերնագիրը՝ գրված է՝ «Քյարիմ Բեկի մասալ»։

47. ՁԸԼԽԱՏԵՆ

(էջ 388)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 169)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Նազարեթ Պ. Մարտիրոսյանը, 1915 թվ. հոկտեմբերի 31-ին, Ալեքսանդրապոլում։ Էջատակին բանահավաքը գրում է. «Գատմեց Գասպար Տ. Աբրահամյան, 50-ամյա, անգրագետ, զբաղում ոընեբրութեն։ Պանդխտած է երկու անգամ Պալիս ու Ռումանիա»։

48. ԱԼԱՋԱ ԵՋ

(էջ 395)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 230)։

Վերնագրի տակ, փակագծում գրված է՝ «Բուլանըխ»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Էջատակին գրված է. «Գատմեց 1915 թվ. հոկտեմբերի 15-ին, Կարաքիլիսեյում, Արևշատ Խլղաթ-Տանեյան, Բուլանըխի Շեխ-յաղուբ գյուղացի, քառասուն տարեկան անգրագետ անձ։ Նախապես ճամբարդել է Կարս, Թիֆլիս։ Իր երկրի մեջ զբաղած է երկրագործությամբ»։

49. ՃՈՒԿՈ

(էջ 403)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 222)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխ»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը։ Էջատակին գրում է. «Գատմեց Կարաքիլիսեյում, 1915 թվ. հոկտեմբերի 16-ին, Արեշատ Խլղաթ-Տոնեյան, Բուլանըխի Շեխյաղուր գյուղացի, քառասուն տարեկան անգրագետ անձնավորություն։ Գանգրխտած է Կարս և Թիֆլիս»։

50. ԻՆՈՑԻ ՀԵՔԻԱԹ

(էջ 410)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ քանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 200)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Գատմեց 1915 թվ. հոկտեմբերի 21-ին Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի բնակիչներեն Սաղաթել Գրիգորյան անուն, անգրագետ երեսունհինգամյա երիտասարդը, որ ապրելիս է եղել Թիֆլիսում, իսկ իր երկրում պարապել է հողագործությամբ»։

51. ՔԵՌԻՆ ՈՒ ԽՈՐՉԵՆ

(էջ 413)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 215)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Գատմեց 1915 թվ. հոկտեմբերի 13-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհի Իգար Գրիգորյան անուն անգրագետ քսանհինգամյա կինը»։

52. ԱՆԶԳԱՄ ԿԻՆ

(էջ 416)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ քանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 219)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Գատմեց 1915 թվ. հոկտեմբերի 14-ին Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի գյուղացիներեն Մուշեղ Գրիգորյան անուն անգրագետ քսանամյա երիտասարդը»։

53. ԽԱԶՈՒ ՄԻՍ

(էջ 420)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 205)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 23-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհիներից Զինար Խլղաթյան անուն անգրագետ հիսունամյա պառավը»։

54. ԲԱԶՈՒԿ

(էջ 425)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 209)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 12-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհի Իդար Գրիգորյան անուն, անգրագետ քսանհինգամյա կինը»։

55. ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՌԵՍԿԻՆ

(էջ 429)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 179)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը 1915 թվ. նոյեմբերի 3-ին, Ալեքսանդրապոլում։ Էջատակին գրում է. «Պատմեց Գասպար Տ. Հարությունյանց։ Ասացողի մասին տե՛ս № 23 հեքիաթի ծանոթագրությունը»։

56. ԳՏԱԾՈՒՐԻԿ ՓԱՐԵՆ

(էջ 431)

Տպագրվում է ըստ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Դ հատորում հրատարակված բնագրի (էջ 89—92)։

Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխա բարբառով»։

Գրի է առել Ս. Հայկունին։ Ասացողի և գրառման այլ հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում։

57. ՖԱՐԽԻԿ
(էջ 436)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 175)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Արտաշես Բտրսեղյանը 1915 թվ. հոկտեմբերի 22-ին, Ալեքսանդրապոլում։

Ասել է Գրիգոր Կիրակոսյանը։ Ասացողի մասին տե՛ս №№ 2 և 6 հեքիաթների ծանոթագրությունների մեջ։

58. ՍԸԹԻՆ ՈՒ ՖԱՐԽԻԿ
(էջ 447)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 181)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղոյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 22-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի գեղջկուհիներից Իֆո Քրեյան անուն երեսունամյա անգրագետ կինը»։

59. ՔԱՋԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԻ ՀԵՔԻԱԹ

(էջ 464)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 189)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Ձեռագրի առաջին երեսում եղած վերնագրում գրված է. «Քաջանց թագավորի տղի հեքիաթ», իսկ բնագրի վերևում՝ «Քաջանց թագավորի տղեն»։

Գրի է առել Երվանդ Պեղոյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 27-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի գեղջկուհիներից Իֆո Քրեյան անուն երեսունամյա անգրագետ կինը»։

Հեքիաթի վերջում տողատակին բանահավաքը տալիս է հետևյալ ծանոթությունը. «Էս հեքիաթ պատմողը կըհավաստիացնե ինձի, որ ժամանակով իրենց գյուղի մեջ եղած է գեղեցիկ կին մը, որու վրա օձու կերպարանքով իբր թե Քաջանց թագավորի տղեն կսիրահարվի. իրեն կնության մեջ օր մը կհամաձայնի և սեռային հարաբերության մեջ կմտնի։ Երիտասարդը մեծագույն բարիքներ կուտա այդ կնոջը և այդ կնոջ բերած ուլունքներեն մի քանիս ինք հեքիաթ պատմողը տեսած է այդ կնոջ թոռան թոռի վզին»։

60. ՔԵՎՈՐ ՍԱՆԱՄԵՐ

(էջ 468)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 220)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Կոփ»։

Գրի է առել Երվանդ Պեզազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 16-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Կոփ գյուղի դյուղացիներեն Մուշեղ Գրիգորյան անուն անգրագետ քսանամյա երիտասարդը, որը Կոփի մեջ զբաղված է եղել կոշկակարությամբ»։

Տպագրվում է մասնակի կրճատումներով։

61. ՄԵՂԱՎՈՐ ԿՆԻԿ

(էջ 471)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 195)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեղազյանը։ Հեքիաթի վերջում, էջատակին բանահավաքը գրում է. «Պատմեց 1915 թվ. նոյեմբերի 5-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխ—Փիոնք գյուղի բնակիչներից Գասպար Տեր-Աբրահամյան անուն, անգրագետ, հիսունհինգամյա մարդը, որ երբեմն ապրել է Թիֆլիսում, մոտավորապես յոթ տարի»։ Իսկ հեքիաթի ձեռագրի առաջին էջում, վերնագրի տակ բանահավաքը գրում է. «Պատմեց...» (նույնը ինչ որ վերևը նշեցինք), բայց այստեղ ասացողը ոչ թե հիսունհինգամյա, այլ «հիսունամյա» է։

62. ՄԱՐԴՈՒ ԳԼԽՈՒ ԳՐԱԾ ՉԱՎԻՐԻ

(էջ 476)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 196)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։

Ձեռագրի առաջին երեսին գրված վերնագիրն է. «Աստծու գրած գիր չավիրի», իսկ տեքստից առաջ, վերնագիրն է. «Մարդու գլխու գրած չավիրի»։

Վերնագրի տակ, փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

34—1086

Գրի է առել Երվանդ Պեզազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. նոյեմբերի 6-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի բնակիչներից Գասպար Տեր-Աբրահամյան անուն անգրագետ հիսունամյա մարդը, որ երբեմն ապրել է Թիֆլիսում, մոտավորապես յոթ տարի»։

63. ՃԱԿԱՏԻ ԳԻՐ

(էջ 480)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 239)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխի Շեխյաղուբ»։

Գրի է առել Երվանդ Լալայանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 15-ին, Մեծ Ղարաքիլիսա գյուղում, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղացի Գասպար Շհոյան, 45 տարեկան անգրագետ երկրագործը։ Վերջին գաղթից առաջ 10 տարի մնացել է Փոթի, Բաթում և Թիֆլիս և պարապել մշակությամբ»։

64. ԱՍՏՎԱԾԱՎԱԽ ՄԱՐԴՈՒ ԱՂԵՆ

(էջ 482)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 198)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեզազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. նոյեմբերի 6-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի բնակիչներից Գասպար Տեր-Աբրահամյան անուն անգրագետ հիսունամյա մարդը, որ երբեմն ապրել է Թիֆլիսում, մոտավորապես յոթ տարի»։

65. ՊՍՏԻԿ ՏՂԻ ՌԸՍԿ

(էջ 488)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 197)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Երվանդ Պեզազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. նոյեմբերի 6-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Փիոնք գյուղի բնակիչներից Գասպար Տեր-Աբրահամյան անուն անգրագետ հիսունամյա մարդը, որ ապրել է Թիֆլիսում մոտավորապես յոթ տարի»։

66. ՔՈՌ ԽԱԼԻՎՈՐ

(Էջ 491)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 236)։

Վերնագրի տակ, փակագծում գրված է «Բուլանըխ, Շեխյաղուբ գյուղ»։

Գրի է առել Երվանդ Լալայանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 16-ին Ղարաքիլիսա գյուղում, նույն Բուլանըխ Շեխյաղուբ գյուղի բնակիչ Գասպար Շհոյան, անգրագետ, քառասունհինգ տարեկան երկրագործը»։

67. ՊՈԶՈՒ ԽԱՓԱԹ

(Էջ 494)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 206)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրված կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխ—Կոփ»։

Գրի է առել Երվանդ Պեզազյանը։ Էջատակին գրում է. «Պատմեց 1915 թվ. հոկտեմբերի 23-ին, Ալեքսանդրապոլում, Բուլանըխ Կոփ գյուղի գեղջկուհիներից Զինար Խլղաթյան անուն, անգրագետ հիսունամյա պառավը»։

68. ԾՈՒՌ ԱԽՋԸԿՆԵՐ ՈՒ ԾՈՒՌ ՄԵՐ

(Էջ 496)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԶԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 180)։

Ձեռագրի վրա դրված է «Ե. Լալայանի խմբագրված կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ—Փիոնք»։

Գրի է առել Սենեքերիմ Շալճյանը 1915 թվ. հոկտեմբերի 26-ին, Ալեքսանդրապոլում։ Էջատակին բանահավաքը գրում է. «Պատմեց Խզալ Խաչատուրյան, հիսունամյա անգրագետ կին»։

69. ԱԴԻ ՈՒ ԲՈՒԴԻ

(էջ 501)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 204)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է՝ «Բուլանըխ Կոփ»։

Գրի է առել Երվանդ Գեղազյանը։ Էջատակին գրում է. «Գատմեց 1915 թվ. հոկտեմբերի 23-ին Ալեքսանդրապոլում, Բուլանըխի Կոփ գյուղի գեղջկուհիներից Զինար Խլղաթյան անուն անգրագետ, հիսունամյա պառավը»։

70. ԿԱՐԻՐ ԽԱԼԻՎՈՐ

(էջ 507)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահվում է ԳԱ ՀՆԱԳԻ բանահյուսության արխիվում (տե՛ս, Երվանդ Լալայանի ֆոնդ, գործ 1, ձեռ. № 233)։

Ձեռագրի վրա գրված է «Ե. Լալայանի խմբագրված» կնիքը։ Վերնագրի տակ փակագծում գրված է. «Բուլանըխ Շեխյաղուբ»։

Գրի է առել Երվանդ Գեղազյանը։ Էջատակին գրում է. «Գատմեց 1915 թվ. հոկտեմբերի 16-ին, Կարաքիլիսեյում, Բուլանըխի Շեխյաղուբ գյուղի գեղջկուհիներեն Դիլբա Սարխաշյան անուն անգրագետ վաթսունամյա պառավը»։